

N 15 - 16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող
առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից

15. Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

- ա. Ներսես Ա Պարթև
- բ. Հուսիկ Ա Պարթև
- գ. Շահակ
- դ. Վրթանես Ա Պարթև
- ե. Փառեն

| | |
|---|--|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |
| 5 | |

16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության. (1 միավոր)

- ա. Կարսի Կաթողիկե եկեղեցու կառուցումը
- բ. Սևանա կղզու Ս. Առաքելոց եկեղեցու կառուցումը
- գ. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Աղթամար
- դ. Անիի Ս. Հովհաննես եկեղեցու կառուցումը
- ե. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինա

| | |
|---|--|
| 1 | |
| 2 | |
| 3 | |
| 4 | |
| 5 | |

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցերին.

«Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծո սպասավորների նկատմամբ սիրալիր: Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում ու բազմացնում էր նրանց պիտույքները, որպեսզի մարմնավոր պետքերից ոչ մի բանի կարիք չզգան, այլ միայն աղոթքներով ու արարողություններով զբաղվեն: Նրա հաստատած վանքերից մեկն էր Ակներ կոչված հոչակավոր վանքը»:

1) Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը: (1 միավոր)

2) Ո՞ւմ մասին է պատմիչի խոսքը: (1 միավոր)

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ.

(2 միավոր)

- 1) Սմբատ I-ը Շիրակավանում թագադրվում է Ջաքարիա Ջագեցու ձեռքով:
- 2) Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ մղված հակապարսկական ազատագրական շարժմանը և մարտերին մասնակցում էր նաև Հայոց կաթողիկոս Հովհաննես Ա Մանդակունին:
- 3) Հիսուս Քրիստոս Իր աշակերտներին ընտրեց գրագետ և ճարտասան մարդկանցից, որոնք հինգ տարի շրջեցին Հիսուսի հետ:
- 4) Պատմիչները մայրաքաղաք Անին կոչել են «Մայրաքաղաք իմաստության», «Երկրորդ Աթենք պանծալի», «Գերահռչակ համալսարան»:
- 5) Եկեղեցու ատյանի հյուսիսային կողմում գտնվում է մկրտության ավազանը, իսկ արևելյան կողմում՝ բեմը կամ խորանը:

| | |
|--|--|
| | |
|--|--|

19. Թվարկված տոներից ո՞ր երկուսն են անշարժ.

(2 միավոր)

- 1) Խաչվերաց
- 2) Ավետում
- 3) Սուրբ Սարգիս
- 4) Սրբոց Վարդանանց
- 5) Ծաղկագարդ
- 6) Համբարձում
- 7) Տյառնընդատաջ
- 8) Թարգմանչաց
- 9) Վարագա խաչի
- 10) Կաթուղիկե Սուրբ Էջմիածնի

| | |
|--|--|
| | |
|--|--|

20. Շարադրանք (2 միավոր)

Ներկայացրեք և գնահատեք Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսի գործունեությունը: